



Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 29_L

29 հունիսի 2022 թվական

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿՄՕ-22 ԺՅՈՒՐԻԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԵՎ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀՅՈՒՐԱՆՈՑՆԵՐՈՒՄ ԲՆԱԿՎԵԼՈՒ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԵՎ «ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԵՊՀ ՄԱՍՆԱՇԵՆՔԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ 50 ՄԻԼԻՈՆ ՀՀ ԴՐԱՄԻ ՍԱՀՄԱՆԱԶԱՓԸ ԳԵՐԱԶԱՆՑՈՂ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ «ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՌԱՆՑ ՄՐՑՈՒՅԹԻ (ԱՐՏԱԿԱՐԳ ԿԱՄ ՉՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՅԼ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ) ՄԵԿ ԱՆՁԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳՆՈՒՄՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 23-րդ կետի 5-րդ ենթակետով, «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 42-րդ կետի 17)-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4 կետի 17)-րդ ենթակետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը որոշում է.

1. Հաստատել ՀՀ գնումների օրենսդրության պահանջներին համապատասխան կնքված «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կարիքների համար 2022 թվականի մարտի 18-ին կնքված թիվ ԵՊՀ-ԲՄԾՁԲ-22/12 ծածկագրով ԿՄՕ-22 ժյուրիի անդամների և մասնակիցների համար հյուրանոցներում բնակվելու ծառայությունների մատուցման 80 499 600 ՀՀ դրամի պայմանագիրը՝ համաձայն հավելված 1-ի:

2. Հաստատել ՀՀ գնումների օրենսդրության պահանջներին համապատասխան կնքված «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կարիքների համար 2022 թվականի հունիսի 24-ին կնքված թիվ ԵՊՀ-ՀՐՄԱՇՁԲ-22/116 ծածկագրով ԵՊՀ մասնաշենքերի վերանորոգման աշխատանքների կատարման 104 880 000 ՀՀ դրամի պայմանագիրը՝ համաձայն հավելված 2-ի:

3. Հաստատել ՀՀ կառավարության 2017 թվականի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 23-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանված պահանջներով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կարիքների համար առանց մրցույթի (արտակարգ կամ չնախատեսված այլ իրավիճակի առաջացման հետևանքով) մեկ անձից իրականացվող հետևյալ գնումները՝ համաձայն հավելված 3-ի.

- 1) 4 650 000 ՀՀ դրամ արժողությամբ համակարգչային տեխնիկայի ձեռքբերում,
- 2) 1 850 000 ՀՀ դրամ արժողությամբ դյուրակիր համակարգիչների ձեռքբերում,
4. 2 100 000 ՀՀ դրամ արժողությամբ շարժական օդորակիչների ձեռքբերում:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հոգաբարձուների խորհրդի նախագահ՝

Ս. Պապիկյան

2022թ. հունիս «29»

Երևան